ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

14 մարտի 2025 թվական թիվ 75-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, 90-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Մայիսյան բնակավայրի 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, 3 հասցեի հողամասի սեփականատեր Ռուբիկ Գուրգենի Ղազարյանի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին՝ որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի տարածքում գտնվող 08-077-0016-0016 կադաստրային ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0,14775 հեկտար մակերեսով հողամասը դրա սեփականատեր՝ Ռուբիկ Գուրգենի Ղազարյանի առաջարկած պայմաններով՝ 2 800 000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) դրամ արժեքով, որը չի ներառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկային պարտավորությունները, առուվաճառքի պայմանագրով ձեռք բերել:

2. Հողամասի ձեռքբերման գինը վճարելու նպատակով համայնքի բյուջեի պահուստային ֆոնդից, 2025 թվականի բյուջեով չկանխատեսված ծախսի ֆինանսավորման համար հատկացնել 3 111 112(երեք միլիոն մեկ հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր տասներկու) դրամ, որից՝ 2 800 000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) դրամը հողամասի սեփականատիրոջը վճարվող հողամասի արժեքն է, իսկ 311 112(երեք հարյուր տասնմեկ հազար մեկ հարյուր տասներկու) դրամը՝ օրենքով սահմանված եկամտային հարկի գումարը:

3. Սույն որոշման 1-ին կետով ձեռք բերված հողամասի նկատմամբ համայնքի իրավունքների պետական գրանցումն իրականացնելուց հետո, այն նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ կառավարության կողմից իրականացվող ծրագրի շրջանակում դպրոցի նոր շենքի կառուցման համար հատկացված՝ Մայիսյան բնակավայրի 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, 3/1 հասցեի հողամասի հետ միավորելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -23 Դեմ – 0 Ձեռնպահ – 1

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ա. ԱՅՎԱԶՅԱՆ
Ս. ՍԻՄՈՆՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վ. ԹՈՐՈՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Թ. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ

Ա. ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

14 մարտի 2025 թվական
գյուղ Ախուրյան